

ПЕРИОДИЧЕСКО СПИСАНИЕ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Ա. ՏԱՐԻ

ԹԻԻ 13

7 ՄԱՐՏ 1898

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշարիսյի համար

սարեկան 10 ֆր.

« «

վեցանսեան 5 «

սար երկիրներու համար

սարեկան 12 «

« « « «

վեցանսեան 6 «

Գրութիւնները եւ չեն դարձուիր

վարչութիւն «խաղաղի» Րուսոֆ
Administration du «Khousag Rousthouk

Отговоренъ-Редакторъ Д. Коларовъ.

Руссе, скоро-печатница на Ст. Ис. Ролевъ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՀԱՆ ՇԱՀՐԻՄԱՆ
ՄԱՐԴՈՒ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Վէպ իրական կեանքէ, որ կը պատկերանէ միջավայրի
ո՛հ մը, որուն նմանները գծրազարար բաղմաթիւ են:

Գին 50 ՍԱՆԹԻՄ

Դիմել Գ. Տէփմէճեանի Ի Րուսչուք:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԿԱՎԱՆԴՁԻՔ

Վիպակ բանաստեղծական

Գին 30 ՍԱՆԹԻՄ

Դիմել Հեղինակին «Վառնա Հայկական Ընթերցարան»

ԵՐԳԱՐԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՁԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐԻՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ի պէսս

ՓՈՔՐԻԿ ՏՂԱՅՈՑ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առաջինն է որ
լոյս կը տեսնէ հայերէն լեզուով, կը պարունակէ մանկա-
կան գուարճալի երգեր ու քանի մը ոտանաւոր առակներ
և կրնայ երախաներուն ծառայել նաև իբր ընթերցանու-
թեան գիրք որուն պարունակութիւնը դրօսեցուցիչ և
հրահանգիչ է միանգամայն անոնց համար:
Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մաքուր և կազմ
վայելուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն Վառնա, Արեւելեան տպարան, Ձրդ. թաղ, թիւ 1104:

Մինչդեռ ամենէն աւելի յետամնաց ժողովուրդներն անգամ՝ կը ձգտին ջնջել, խորտակել միապետական կարգերը՝ մենք դարմանքով կը տեսնենք որ, մեր դպրոցները, մասնաւորապէս պուլկարահայ վարժարանները, կը կառավարուին ոչ ռամկավարական սկզբունքներով:

Տաճկաստանի դաւառներուն մէջ, չատ տեղեր, տեսած ենք ուսուցչական ժողովներ՝ ռամկավարական սկզբունքներով կազմուած, որուն մէջ ամեն ուսուցիչ իր ձայնը ունէր և տեսուչը հոն կը ներկայանար իւր ատենապետ: այս ժողովները վարժարաններու ներքին գործերը կը տնօրինէին՝ դանոնք վիճարանութեան ենթարկելով: Այս շատ բանաւոր ու օգտակար եղանակը, որ երկար առտեն կիրարկուած և անժխտելի արդիւնքներ ցուցուցած է՝ անտարակոյս նախնարելի է միշտ և ամեն պարագայի մէջ գործը դիտովին տեսչի մը յանձնելու միապետական կերպէն, որուն մէջ ստորակարգեալ ուսուցիչները, ալ ևս չեն ուսուցիչներ, այլ վաճառատան մը պաշտօնեաները և կամ բանակի մը սպաները, որ կը շարժին, ուղիղ կամ ծուռ, վերէն եկած հրամանի մը համեմատ: Այս վերջինին պէս կազմակերպութիւն մը կը տեսնենք Բուսուքի մէջ. Վառնայի թերթերուն հրատարակութիւններէն ու դուրսէ ի դուրս մեր իմացածներէն կը հետեւցնենք որ, հոն ալ, նմանօրինակ, գործը դիտովին տեսչին յանձնած են: Այս բնութեամբ աւալան, իր մեծ վնասակարութիւնները ունի, որ սկսած է ցոյց տալ: Ըստ մեզ, եթէ հոգարարութիւնը կարող չէ եղած խորհելու, թէ ուսուցչական ժողով մը անպատճառ հարկ է, դպրոցին ներքին գործերը համաձայնութեամբ ու համերաշխութեամբ լաւագոյն կերպով վարելու համար՝ դէթ Պր. Տեսուչները, որոնք անշուշտ չեն ուրանար միապետականութեան յոռութիւնները և ռամ-

կալարական սկզբունքներու առաւելութիւնները՝ իրենք պէտք էին անձամբ օրինակը տալ ատոր՝ հրաժարելով պահ մը զինուորական հրամանատարի մը պէս իշխելու, հրամաններ արձակելու տղայական լիաւարէն:

Այս մասին մեզ ըլլալիք այն առարկութիւնը, թէ, ուսուցիչներուն անկարողութիւնը պատճառ եղած է, որ պէտքի գործը լիովին տեսչին յանձնուի՝ էն քիչը մեր ծիծաղը կը շարժէ և լաւ գաղափար մը չի տար հոգալար ձութեան գպլտց վարելու ընդունակութեանը մասին:

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Ձիկայ բան մը, աւելի անորոշ, աւելի անստոյգ քան ողորմելի վիճակը գործաւորներուն, կամ վարձուոր պաշտօնեաներուն որոնք՝ աւելորդ է ըսել՝ ամեն երկրի ու ամեն ազգի մէջ կը ներկայացնեն մարդկային ընկերութեան այն ստուար մեծամասնութիւնը որ չարաչար կ'աշխատի, կ'արդիւնաբերէ եւ հազիւ հազ կրնայ միմիայն իր ստամոքսին պէտքերը հոգալ, այն ալ՝ եթէ աւելական գործ մը ունենալու բազմին արժանանայ:

Սակայն ո՞ւր է, ո՞վ կրնայ հիմայ երաշխաւորել ատանկ տեւականութիւն մը:

Կը տեսնենք աշխատասէր, չարքաշ ու պարկեշտ մարդիկ որոնք՝ չնչին ապրուստի մը գնով անտրտունջ կը յագնին, օրերով արիւն քրտինք կը թափեն, որպէսզի կարող ըլլան իրենց կեանքը քաշքշել աշխարհի վրայ:

Ու գոհ են, բաւական է որ չարունակ նոյն միջոցը ունենան այսպէս ազի լեզի կտոր մը չոր հաց ճարելու: Սակայն ո՞չ մէկը կրնայ հաստատապէս յոյս գնել իր գործին յարատեւութեանը վրայ:

Կը նայիս առեւտրական աշխարհին մէջ նիւթական սաստիկ տագնապ մը կը տիրէ, գործերը կազալ կ'ըսկսին եւ վաճառականները կը խորհին իրենց բանուորներուն թիւը պակսեցնել. եւ անա օրին մէկն ալ անխղճօրէն, յանկարծ ճամբայ կը տրուի այն աշխարհ խոյժ բեռնակիրին կամ այն հաւատարիմ գործակատարին որ առուտուրներու առաատութեան ամիսներուն մէջ, անխնայ կ'աշխատէր, կը չարչարուէր՝ առանց յաւելում մը ստանալու իր խեղճ զկրակ առուրէքին վրայ:

Դժբաղդ մարդը, ալ մտածող մը չունի իր վրան, անտուրնէ:

մինչեւ իրիկուն փողոցները կը չափչփէ, գլուխը ամեն դիւր
զարնէ գէշ աղէկ գործ մը ձեռք ձգելու համար, բայց ոչ ոք ականջ
կը կախէ իր աղերսարկու խնդրանքին:

Անոնք որ գործի մը վրայ կը գտնուին, ստիպուած են կա-
տարեալ եսամոլներ դառնալու, եւ իրենց անձէն դուրս մէկը չի
ճանչնալու. որովհետեւ կեանքի պայքարին մէջ, ամենքն ալ միա-
մինակ կ'ըզզան ինքզինքնին, եւ գիտեն, թէ վաղը, իրենց հաւա-
նական անկումի օրերուն մէջ, անձնուէր ձեռք մը չպիտի կենայ
գիրենք բարձրացնող:

Ամեն դուռ գոց է խեղճ անկեալին առջեւ որ, պարտքով խար-
ճով, մէկ երկու ամիս զիմանալէ յետոյ վերջապէս կ'ըստիպուի
ամենացած միջոցներու դիմել, այսինքն՝ ուրիշ աշխատաւորներու
դէմ մեքենայութիւններ բանեցնել եւ անոնցմէ մէկուն անգոր-
ծութեանը մէջ փնտռել իրեն յարմար մէկ զբաղում:

Կը յաջողի կամ ոչ:

Առաջին պարագային մէջ, իր տեղ, ուրիշ մը կուգայ անգոր-
ծութեան տաղտուկը եւ յուսահատեցուցիչ վնասութեան մը բո-
վանդակ դառնութիւնը ըմբոշանել: Երկրորդ պարագային մէջ,
ամեն կողմէ յոյսը կտրած, անօթութեան եւ թշուառութեան զար-
հուրելի տանջանքին մատնուած, ամեն միջոց ազնիւ կը գտնէ,
ամեն ստորնութեան կը խոնարհի որպէսզի քանի մը ֆրանկ ձեռք
ձգէ, իր փորը կշտացնէ եւ իրեններուն վշտի ու կարիքի աղե-
խարշ մըմունջները լռեցնելու հնարաւորութիւնն ունենայ:

Աղքատութիւնը մոռնալ կուտայ չիրեն ամեն աղէկութիւն,
ամեն պարտաճանաչութիւն եւ օրէօր կը մղէ զինքը դէպի նորա-
նոր ցածութիւններ, դէպի մոլութիւն եւ անբարոյականութիւն:

Աւելի կամ նուազ տարբերութեամբ այս անմարսելի անստու-
գութեան, այս բարոյական աւազելի անկումին ենթակայ են առ-
հասարակ ամեն դասակարգի գործաւորներ ու պաշտօնեաներ:

Աչքդ բաց, ու ահա կը հանդիպիս վարժապետի մը կամ զրա-
գիրի մը որ դեռ երէկ գործի մը վրայ կը գտնուէր, կ'ապրէր ու
կ'ապրեցնէր. սակայն այսօր, անձրկած եւ շուարած, իր ետեւը
քայքայած պատրանք մը միայն ունենալով անցեալէն, հոս ու հոն
կը դեղերի, վասնզի շատ ռնգամ ոչինչ պատճառներով՝ պաշտօնանկ
եղած է, զոհուած է պարզապէս չօրպաճիներու անարդար կամայա-
կանութեանը եւ, իր ներկայ չքաւորութեան օրերուն մէջ, իրեն
օգնութեան ձեռք երկնցնող մը չունի բնաւ:

Ամեն տեղ, մեր ամեն մէկ քայլափոխին կը տեսնենք արհես-
տաւոր երիտասարդներ, մէկը կօշկակար, միւսը ատաղձագործ, ու-
րոնց դէմքին վրայ մտատանջութեան իրական, կսկծեցուցիչ ճնշում

մը կայ դրոշմուած եւ որոնք՝ կէս կուշտ կէս անօթի, կը թափառին սրճարանէ սրճարան:

Եթէ պզտիկ հետաքրքրութիւն մը ունենանք, պիտի տեսնենք որ այս դատարկաշրջիկ երիտասարդներէն շատեր անարգար կերպով վռնուած են գործարանէն պզտիկ անհոգութեան մը, ակամայ սխալումի մը պատճառով: Մնացած շատերն ալ գործերու նուազութեան պատրուակով, քիչ մը քաղաքաւար կերպով նետուած են գուրս, չքոտի անգբաղներու մէջ, որոնք բանակներ կը կազմեն:

Կան անդին արհեստաւորներ չալ, որոնք ազտոտ մրցումի մը երեսէն է որ զրկուած են եւ կը տուժեն չարաչար: Կահագործ մըն է, օրինակի համար, որ քանի մը ապսպրանքներ ստանձնած է եւ հազիւ ապրելու չափ շահ մը ունենալով գործին մէջ, ուրախ, զըւարթ կ'աշխատի, աթոռներ կը շինէ, սեղաններ կը պատրաստէ առանց կանխամտածելու, թէ վաղը ի՞նչ փոթորիկ պիտի գայ իր գլխուն:

Ուրիշ արհեստակիցներ, որոնց գլուխը կ'ուռի անօթութենէն, տեսակ մը նախանձով կը դիտեն զինքը եւ օր մըն ալ, կը նայիս, կը փորձեն իրենց ընկերին խաղ մը խաղալ:

Անոնցմէ մէկը, ամեն աջակցութենէ զուրկ, ամեն նեղութեան ենթակայ, վերջապէս ճարպիկութիւն սեպելով կ'երթայ, կը սըլքտըկայ վաճառականին շուրջը, պփփալի խնկարկութիւններով սակարկութեան կը մտնէ անոր հետ, է՛ն ատան գնով կը խոստանայ անոր ապսպրանքները կատարել եւ ասանկ ստորին միջոցով մը իր ընկերին հացը կը խլէ բերնէն:

Եւ ահա կահագործն է կը կորանցնէ իր բոլոր զուարթութիւնը եւ տխրութեամբ ու յուսահատութեամբ համակուած՝ կուգայ, ինքն ալ միանալ անգործներու անպաշտպան ու անօքիկ բանակին որ նիւթապէս ու բարոյապէս կը տառապի աւելի քան տնանկ Յօր երանելին:

Ասիկա է տխուր իրականութիւնը զոր հերքել կամ ուրանալ բացարձակապէս անկարելի է գգազգաբար:

Ով ինչ կ'ուզէ թող ըսէ, ամեն գործաւոր, ամեն պաշտօնեայ, մեծ կամ փոքր համեմատութեամբ, անպայման խաղալիկ է չօրպաճիներու քմահաճոյքին որոնց բարի կամեցողութենէն միայն կախում ունի գրեթէ աշխատաւորներու գործին տեսողութեան չափն ու սահմանը:

*
*
*

Ի՞նչ տեսնենք գրագիրներ, պաշտօնեաներ որոնք տարիներով կրցած են միայլ միեւնոյն մարդուն մօտ, միեւնոյն գործին մէջ, եւ

իրբ թէ, արժանացած են իրենց չօրպաճիներու անսահման վստահութեանն ու համակրանքին:

Կատարեալ միամիտ մը ըլլալու է մարդ հաւատալու համար սակայն, թէ այս կարգի աշխատաւորներուն վիճակն ու ապագան ապահովուած է բոլորովին: Ա՛մենեւին: Ստրուկ համակերպութեան, եւ կոյր հպատակութեան ընդհանուր օրէնքին դէմ՝ պղտիկ ընդվզում մը կարող է տառնկներուն գործն ալ վտանգի մասնել:

Չօրպաճի մը չի վարանիր իր սարիներով պաշտածը մէկ ժամու մէջ այրել, եթէ իր բոլոր քմահաճ պահանջութիւններուն հանդէպ ո՛ր եւ իցէ զանցառութիւն մը տեսնելու ըլլայ:

Չօրպաճին բարի կ'ըլլայ, գործ կուտայ միշտ պայմանով որ պաշտօնեան հրաժարելով հրաժարի իր զգացումներէն, իր հասարակական գործունէութենէն եւ՝ ուրացած իր ուղեղը, իր միտքն ու սիրտը, մեքենական հլութեամբ խոնարհի ամեն հանգամանքի:

Եւ անոնք որ կ'ուզեն յարատեւ մնալ իրենց գործին մէջ, պարտաւորած են փայփայել ամեն գծուձ խաբէութիւն, մարել, փճացնել իրենց մէջ վայելելու ամեն իղձ, կոյր մնալ ընկերական ամեն անիրաւութեան հանդէպ, բնաւ ձայն չի բարձրացնել ստութեան եւ կամայականութեանց դէմ, քծնիլ ու շողորթողել շարունակ, մէկ խօսքով՝ միսէ շինուած անխօս գործիք մը գառնալ չօրպաճիին ափին մէջ:

Եթէ ո՛չ անկարելի՝ գոնէ չո՛ւս, խի՛ստ չատ դժուար է հանդիպիլ աշխատաւորի մը, որ գիտնայ պահել իր անկախ նկարագիրը, որ ձեռներէց ոգի մը ունենայ եւ իր սեպական հանդուժներուն համապատասխան գործ տեսնէ՝ օգտակար դառնալու համար իր նմաններուն ու ազգին:

Շարունակական ստրկութեան դատապարտուած է գործաւորը, իր ներկան նիւթական ու բարոյական խեղճութիւնն է, իսկ ապագան՝ անստուգութիւնը, յուսահատութիւնը միայն:

*
*
*

Որքան ակներեւ է աշխատող դատակարգի այս կրկնակի անկումը, նո՛յնքան անժխտելի է սա ճշմարտութիւնը, թէ ժողովուրդը՝ շատ տեղեր, առանց ուղեցոյցի, բոլորովին լքուած է խորհող դատակարգէն եւ մէկը չի կայ որ մտածէ ձեռք բերել ան'անկ միջոցներ, որոնցմով դիւրանայ, կարելիութիւն սահմանին մէջ, ատիճանաբար մեղմացնել բոլոր այն աղէտները որոնք ամեն օր պատրաստ են պայթիլ բանուորի զանկին վրայ եւ հետզհետէ ջարդ ու փշուր ընել զայն:

Դժբաղդաբար ո՛չ իսկ ժողովուրդը հեռամտութիւն ցոյց կու-

տայ իր դառնադէտ կսկիծներուն դարման մը խորհելու մասին: Ընդհակառակը, շատ անգամ ու շատ տեղեր, ինքն է, ժողովուրդը, որ իր ձեռքով կը հայածէ բոլոր այն անձերը որոնք՝ առանց ո՛ր եւ է ակնկալութեան, կ'ուզեն պրպտել իր ցաւերը եւ ուղղադատութեամբ հարուածել իր տգիտութիւնը եւ այն նախապաշարումները որոնք բաւական կարեւոր տեղ մը կը բռնեն իր թշուառութեան արմատական պատճառներուն մէջ:

Եւ եթէ օրէ օր աւելի կը վատթարանայ դործաւորներու վիճակը, պատճառներէն մէկն ալ ա՛յն է որ անոնք բնաւ չեն հետաքրքրուիր իրենց ապրած կեանքովը եւ յաճախ արհամարհանքով կը վերաբերուին դէպի այն շարժումները որոնց մէջ կարելի է որ իրենց վշտերուն սպեղանի մը եւ իրենց ծանր բեռին թեթեւութիւն մը գտնեն:

Հասարակութեան այս տկարութիւնը եւ անգիտակցութիւնը որքան ալ քննադատելի ու ցաւալի ըլլան, չեն կրնար սակայն արդարացնել այն կարգի մարդիկը որոնք կը յաւակնին ինքզինքնին զարգացած ու ժողովրդասէր հռչակել եւ որոնք՝ պզտիկ դժուարութեանց առջեւ վհատելով, ձեռքերնին ծալած կը նստին եւ, Պիղատոսի մը պէս, կ'ուզեն չպրտել ամեն պարտականութիւն:

Անտարակոյս, ճշմարիտ ժողովրդասէրները անոնք են, որոնք առանց խուժանը արհամարհելու, կ'արդանատին անոր տգիտութեան ու խեղճութեան վրայ եւ իրենց կարողութիւնն ու ազդեցութիւնը կը ծառայեցնեն ամեն անգամ ժողովուրդի իսկական շահերուն:

Մեր աչքին առջեւ օրը օրին աճող թշուառութիւնները ամենուս վրայ պարտք կը դնեն բանուորներուն ներկայ վիճակը մեր ուշադրութեան առարկայ ընել քիչ մը սա մեր՝ վայրավատին ու անստոյգ կացութեան մէջ, ուր, աւելի քան երբէք, պէտք ունինք բարոյական ուժերու համախմբումին հետզհետէ ջնջելու համար անօթութենէ առաջ եկած չարիքները եւ զօրացնելու համար մաքառումի ուժը իրերու հակառակութեանց դէմ:

* * *

Լաւ համոզուած ենք որ առանց կեանքի պայմաններու հիմնական ու խեղացի փոփոխութեանը, կարելի չէ երբէք իրապէս փրկել աշխատող դասակարգը իրեն սպառնացող հանապազօրեայ ցաւալի վնասներէն ու թշուառութենէն:

Ասով մէկ տեղ, կը կարծենք որ գո՛նէ բանուորները կրնան քիչ շատ իրենք իրենց վիշտը ամոքել, եթէ իրենց մէջ հաստատուած ունենան օրինաւոր եւ լուրջ կազմակերպութիւն մը:

Այս անկեղծ հաւատքով կը փափաքէինք կազմուած տեսնել, որոշ ծրագրով, « բանուորական միութիւն » մը որուն գլխաւոր նպատակը ըլլայ գործաւոր դասակարգին մէջ առաջ բերել նիւթական եւ բարոյական ուժ մը, որով մէկ աստիճան կարելի դառնայ չքաւորութեան եւ անգործութեան ծնած զանազան աղէտներն ու թշուառութիւնները մեղմացնել կամ ջնջել:

Ուրախ ենք յայտարարելու որ վերջին օրերս ասանկ կազմակերպութեան մը եռանդով ձգտարկեցին արդէն կարգ մը մեզի համամիտ երիտասարդներ որոնք այժմէն մտածած են նաեւ մեր ի վերեւ յայտնած նպատակը իրագործելու համար անհրաժեշտ եղող բոլոր գրական միջոցներուն վրայ:

Հիմնադիր յանձնաժողովը յատուկ շրջաբերականով իր կողմէն պաշտօնապէս պիտի յայտարարէ ընդհուպ, « բանուորական միութեան » նպատակը, միջոցները եւ անդամակցութեան պայմանները. ուստի առ այժմ մեզ կը մնայ միայն կոչում ընել Տեղիս բոլոր հայ գործաւորներուն որպէսզի առաջին առիթով, փութան իրենց սիրայօժար անդամակցութեամբ, իրականացնել այս օգտաշատ «միութիւն»ը եւ ապացուցանել, թէ ընդունակ ու պատրաստ են խրախուսելու ինչ որ օգտակար է:

Աւելորդ չըլլար կարծեմ յայտնել, թէ «միութիւն»ը բոլոր սրտով պիտի աշխատի նաեւ բանուորներուն մէջ մշակել համերաշխութեան ոգին եւ զարգացնել փոխադարձ օգնութեան պարտականութիւնը: Ամեն ջանք ի գործ պիտի դնէ որպէսզի աշխատաւոր դասակարգը աւանդական ստրկացուցիչ նախապաշարումներէն ազատուի, իր արգահատելի վիճակին վրայ խորունկ ու ճշմարիտ գիտակցութիւն ունենայ եւ իր դասակարգային շահերը, որքան հնար է, պաշտպանել գիտնայ խելքով եւ հաւաքական ուժով

ՎԱՀՍՆ ՇԱՀՐԻՄՅՆ

Ք Ր Օ Ն Ի Ք

Բիւզանդիոն ու Զօրա. — Զօրա եւ մերինները

Անցածները Բիւզանդիոն մը ձեռքս անցաւ, ուր առաջնորդող մը կար «կեցցէ՛ Ծրանսա» խորագիրով:

Ոմբագիրը հոտած բառերով, ապուշ լուտանքներով ու բըխունք սրամտութիւններով անբարոյական Զօրային պարտութիւնը յայտնելէն յետոյ, կը ծափէ Ծրանսան, որ իր ծոցէն գիտէ վտարել բոլոր վնասակար օձերը:

Հեղինութիւն մը, թուք մը թերթին ու խմբագիրին՝ կ'երթամ եւրոպական թերթերը աչքէ անցնել, ուշագրութեամբ հետեւելով դատաւարութեան ու առկախ կէտերուն, որոնք, կէտ կը մնան միշտ...

Իրաւ մեծ դէմք մըն է Զօլա, այն ազտոտ ու փայլուն կեղծիքին մէջ, որ ժամանակակից պատմութեան մէկ մշուշոտ էջը պիտի կազմէ, այդ դէմքը անկեղծ ու բարձր պատկեր մը պիտի մնայ, մէկը՝ անոնցմէ, որոնք, կորսուած հիմա անցածին մէջ, բայց մեզի կը քաշեն:

Երեւակայեցէք որ, մինչդեռ պաշտօնական Ֆռանսա, անբարոյական աղջկան մը պէս, որ լիտի չպարը կը փայլեցունէ իր երեսին, կը ծածանեցունէր կեղծ դրօշակ մը ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան, Զօլա միակը եղաւ, որ՝ Տրէյֆիւսի խնդիրին առիթով, փեթռաէ այդ դրօշակը, երթայ այդ անբարոյական աղջիկին ազտոտութիւնը երեսին ժայթքել, Զօլա մի'ակը՝ որ պօռաց. « դուն բող մըն ես... »: Մարդկութեան համար, արդարութեան համար զոհուեցաւ, բայց կատարեց իր մարդկային պարտքը, իր ձայնը ամբողջ աշխարհի մէջ հնչեցուց. « պիտի ճառագայթացնեմ ճշմարտութիւնը »: Նեխած ուղեւորները ու տափակ միտքերը չեն կրնար հասկնալ զինքը. իր ողորմելի ապիկարութեանը մէջ կզկտած պառաւ սերունդը կ'անցնի կ'երթայ: Մեր լրագրութեան, պատմութեան մէջ, սողունի սինլքոր հետք մը կը ձգէ կ'անցնի Բիզզանդիոնը, բայց Զօլա կը մնայ միշտ բարձր, միշտ վսեմ, միշտ ժողովրդական: Պատմութիւնը առաջինին կը նետէ իր թուքը, երկրորդին կը նուիրէ իր դափնին:

* * *

Ահաւասիկ յեղափոխականը — Զօլա՛ն — ահաւասիկ ճշմարիտ յեղափոխականը. մերինները թո՛ղ անոր նային, մեծ աղգերը թող մէյ մէկ բառարաններ ըլլան մեզի համար, ուր դիտնանք փնտռել « յեղափոխական » բառը: Մենք, հոս ունինք կին յեղափոխականներ, կոյս մտած այդ ասպարէզը ու Սուրբ Մարիամին պէս հրաշքով կին եղած... որոնք, մինչդեռ մեր ամենուս սիրտը երած է, մինչդեռ հազարաւոր սիրական դէմքեր, մարտիրոս՝ իրենց թարմ յիշատակովը կը խշխշացնեն մեր սիրտը, բարեկենդան կ'ընեն, ամեն բան մոռցած, ժողովրդային տառապանքներէն հեռու, ինքնալքման հաճոյքին անձնատուր...: Զաղրելի ու տխուր երեւոյթներ են ասոնք ու յայտարար ապացոյցներ թէ՛ մենք ժողովուրդին տառապանքներէն մղուած չէ որ յեղափոխականներ եղած ենք: Զէ՛, ալ այսչափ շահագործել չըլլար Յեղափոխութեան անունը,

չպար չընե՛նք անիկա մեզի օր մը առաջ կուսակցական աժուսին մը գտնելու համար: Մեր երիտասարդ զոհերուն հետ չը խաղանք, ինքզինքնիս յեղափոխական չը հռչակե՛նք զէթ՝ երբ քանի մը բառեր, թուշուններու պէս, անիմաստ թեւաբխումներ կ'ունենան մեր միաքին մէջ: Գիտակցութիւնը ունեն՛անք այն ասպարէզին ուր կը նետուինք կոր հիմա խիզախօրէն, լրջօրէն պատրաստուինք ատոր, ու գազափարային ուխտով մը մղենք մեր կռիւը յանուն արդարութեան:

Վառնա

Խ. Թ

Ա Չ Ք Ի Լ Ո Յ Ս

Աչքի լոյ՛ս, բոլոր նենգամիտ պուրժուաներուն, որոնք ամեն ատեն կը վախնան ճշմարտութենէն եւ արդարութեան աիրապետութենէն:

Աչքի լոյ՛ս, բոլոր ճիզուիթներուն, որոնք իրենց երկար ու սեւ քղանցքին տակ կը պահպանեն բռնաւորներն ու հարստահարիչները եւ իրենց տխրանուագ «ալէլուեա»ներով կ'ուզեն խեղդել իրաւունքի եւ գիտակցութեան ձայնը:

Աչքի լոյ՛ս, Զօրավարներուն եւ հրամանատարներուն որոնք զինուորական ատենանի անախալականութիւնն ու միահեծանութիւնը հռչակեցին եւ անամօթ սպառնալիքով մը աղաղակեցին. «Եը Զարդինք ձեր զաւակները, եթէ անպարտ արծակէք Զօրան»:

Աչքի լոյ՛ս, խաժամուժ ամբոխին, որ «ի խաչ հան» կը պուռար եւ որուն համար ըսած է Աւետարանի վարդապետը. «տէր թող դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն»:

Աչքի լոյ՛ս, եւ մե՛ծ աւետի՛ս, նաեւ Վիէննայի «Հանգէս արսօրեայ» ին, վառնզի 1 տարի բանտարկութեան եւ 3000 ֆրանք տուգանքի դատապարտուած է վերջապէս

«Ճղմաթաթաւ գրապէտ»ը, որուն «Լուրտ»ը եւ «Հոովմ»ը գղրկեցուցին կղերական էսնաֆի անառիկ դիրքը:

Շիտակը մարդ կ'ապշի կը մնայ տեսնելով որ Փրանսայի՝ մեծ յեղափոխութեանց այդ ծնագալայրին՝ մէջ, մարգկային ինքնապաշտ պանութեան իրաւունքը կը բռնաբարուի անհաւատալի բարբարոսութեամբ:

Զօրայի այս քմահաճ եւ անարգար դատապարտութիւնը անջնջելի արատ մը պիտի մնայ Միքապօսներու, Կամզէթթաններու եւ Հիւլօսներու Հայրենիքի ճակարին վրայ՝ ուր աղատութեան, լոյսի եւ հաւատարմութեան յաւիտենական սկզբունքներուն համար է՛ն

կատաղի եւ է՛ն արիւնալի կռիւները մղուած են անձնուրաց հոգիներով:

Թէ որ մարգարէութեան եւ հրաշքի դարերը անցած չըլլային, ապահովաբար, Բարիզի երդուեալ դատաւորներու ժողովաւարանի պատին վրայ, աներեւոյթ ձեռք մը իրաւամբ գրած կ'ըլլար հիմա. «Մանե, քեկեղ, քսութեաւ»:

«Հանրապետական Ֆրանսա» ըսել, հեղինական, անիմաստ խօսք մըն է կարծես, քանի որ զինուորականութիւնն ու կղերականութիւնը երկրին միահեծան տէրն են այս օր եւ գերիվերոյ են օրէնքէն ալ, արդարութենէն ալ:

Ով որ կը յանդգնի, թող հակառակ զօրապետներու կամքին, ճշմարտութիւն մը խօսի, անմեղ մը կամ իրաւունք մը պաշտպանէ. բանա՛ կամ մահ, ա՛յս 'կըլլայ իր վարձքը:

Եւ Զօլան պէտք է յաւիտեան երախտապարտ մնայ որ աժան մը փրկուեցաւ այսպէս: Ո՞վ ի՛նչ պիտի կրնար ընել, եթէ էս-թէրհազիւներ իր արիւնով Արդարութեան պալատի դուռը ներկէին

* * *

Եթէ կառավարութեան այս վրան բաց ապօրինութեանց դէմ մխիթարական բան մը կայ, ան ալ անմիջական երեւումն է Ժօրէսներու, Ռիշարներու եւ Ռընէներու նման անկեղծ ու անկաշառ դէմքերու, որոնք չեն ուզեր ճշմարտութիւնը ապտակուած տեսնել, եւ իրենց բողոքի մարտաշունչ ձայնը կը բարձրացնեն խիզախ համարձակութեամբ:

Փետրվար 24 ին, այն օրը՝ ուր Ֆրանսական 1848 ի անմահ յեղափոխութեան տարեդարձը կը տօնուէր, ուր ժողովուրդը՝ անգիտակ իր վիճակին, «կեցցէ՛ Ֆրանսա» կը պոռար, անդին, եղան լրջախոհ մարդիկ որոնք սրտի անհնարին վրդովմունքով մը եւ սարսուղգեցիկ յուզումով մը կը դիտէին Զօլայի դատաստանին շուրջը դարձած մեքենայութիւնները եւ լպիրջ կամայականութիւնները:

Եւ ճիշդ այդ օրն էր որ Հիւպար Երեսփոխանական ժողովի նախագահին, Պ. Պրիսօնի, կ'ուղղէր նամակ մը որով կը զեկուցանէր թէ պատերազմական գործերու նախարարին հարցումներ ունի ընելիք:

Արդարեւ Փետրվար 25 ին գումարուեցաւ ժողովը՝ ուր՝ մա՛ն նաւանդ Ռընէ Վիվեանի, զինուորե՛ալ ընկերվարական, շանթահարիչ պերճախօսութեամբ կը 'պարզէ իր Կուսակցութեան կարծիքը Տրէյֆիւս—Զօլայի գործին վերաբերութեամբ, եւ հրաշէկ խօսքերով կը բողոքէ այն ակնյայտի դաւաճանութեան դէմ որով

կառավարութիւնը ճիշդութեամբն եւ զօրապետներուն ծախած է Հասարակապետութեան ազատ ու հաւասար օրէնքները:

Ազգողաբար կը պախարակէ ոճրագործական ատեանը որ՝ հա-
կառակ իր վսեմ պարտականութեան՝ քաջութիւն չունեցաւ ճշ-
մարտութիւնը մերկապարանոց յայտնելու եւ, ընդհակառակը, ան-
լուր բռնութեամբ արգիլեց ազատ խօսքը, բռնաբարեց օրէնքը ու
խեղդեց արդարութիւնը, ի պատի՛ւ . . . բանակին^{օօ}:

«Զինուորական պաշտօնեաները ազգին ծառայողներն են, կ'ըսէ
Վիվեանի, եւ ո՛չ թէ տէրերը». հետեւաբար՝ իրենց յանցանքին,
իրենց մատնութիւններուն ու զեղծումներուն համար պատասխա-
նատու են հասարակութեան առջեւ:

Կառավարութիւնը սակայն, ուրանալով այս ա՛մենապարզ ճշ-
մարտութիւնը, անհասանելի տրամաբանութեամբ մը մեծաձայն կը
յայտարարէ, թէ զօրավարները ամեն պատասխանատուութենէ ու
ամեն քննութենէ ազատ են եւ ուստի՝ բանակը նախատած կ'ըլլան
ամեն անոնք որ կը պնդեն, թէ ամեն պարզ մահկանացուի պէս,
բանակին պետերն ալ զատաստանի կրնան կանչուիլ երբ Հայրե-
նիքի գէմ կը դաւաճանեն անոնք:

Ինքը, Մէլինն էր որ, ամիս մը առաջ, վկայութեան կանչուած
զօրապետները իրենց անել ու երկգիմի վիճակէն փրկելու մտեր-
մական ճիշդով եւ կանխանոգ խմատութեամբ, արտասանեց սա
խօսքերը, թէ «Զօրավարները երգուեալներու դատաստանին են-
թարկել կարելի չէ»:

Նախարարին խօսքը իր անպատկառ հետեւանքը ունեցաւ.
Պուատէֆը եւ Բէլիէօ արհամարհանօք մերժեցին պատասխան տալ
իրենց ուղղուած հարցումներուն եւ մինչեւ իսկ զինագուլ ընել
սպառնացին:

Ո՛վ իրաւունք ունի զիրենք դատելու, եթէ նոյն իսկ մատնիչ
ըլլան. . . :

Վիվեանի՝ հիմակուան զօրավարներուն կը յիշեցնէ յեղափո-
խութեան անձնուէր զօրապետները յորոնք «իրենց փայլուն ու
փառաւոր յաղթանակներուն յաջորդ օրը իսկ կը խոնարհէին ազ-
գային ժողովին առջեւ:»

«Չեմ հասկնար, թէ ի՞նչպէս Մէլին այն խօսքերը արտասա-
նեց: Մենք կը յարգենք բանակը, կը գոռայ պերճախօս ատենա-
բանին ձայնը, վասնզի անիկա ազգին արիւնն ու մարմինն է. սա-
կայն Հրաւնահասարեւոռո սխալները ֆենադաւեղու մեր իրաւունքը
կ'ուզենի՛ պահել միշտ»:

Վիվիանիի այս յայտնութիւնը մեզ իրաւունք կուտայ հաւա-
տալու, թէ Ֆրանսայի մէջ դեռ բոլորովին մեռած չէ անաչառ

քննադատութեան եւ անիրաւութեանց դէմ կոռուելու ասպետական վեհ հոգին, որ անշուշտ ուչ կամ կանուխ, երեւան պիտի հանէ ճշմարտութիւնը իր բովանդակ մերկութեամբ:

Մինչեւ այս մեծ օրի հասնիլը սակայն, կրնանք մենք ըսել. աչքի լոյս նենգամիտ պուրժուաներուն. քղանցաւոր ճիգութիւններուն, սոսերակիր զօրավարներուն:

Լ.

ՎԱՆՔԷՆ ԴՈՒՐՍ

« Հանդէս ամսօրեայ » ի մէջ կարդացի քանի մը համառօտ գիտողութիւններ « Մարդու մը պատմութիւնը » անունով տետրակիս վերաբերութեամբ:

Ինչպէս կ'երեւի, Բարեպաշտ քննադատին դիւրագրգիռ ջիղերուն է դպեր որ, փոխանակ բարիին, լրբութիւնն ու անպարկեշտութիւնը յաղթանակ տարած են գրածիս մէջ:

Ծիշդ այդ տեսութեամբ գրած էի արդէն տետրակս: Այսինքն՝ կ'ուզէի ցոյց տալ թէ մեր ապրած ներկայ կեանքին մէջ, դժբաղդաբար, անոնք միայն կը յաջողին որոնք կը շոյեն ամեն ստույթիւն, իրենց ողնաշարը կը ծռեն դատարկապորտ չօրպաճիներուն առջեւ եւ, լարուած մեքենայի մը նման, կը հպատակին անոնց ամեն մէկ կամայական հրամանին:

Կ'ուզէի դարձեալ ցոյց տալ, թէ է՛ն ընտիր ձիրքերով օժտուած մարդն անգամ, անօթութեան ու թշուառութեան առջեւ կը կորսնցնէ իր կորովն ու առնականութիւնը, կ'ըստիպուի ուրանալ իր զգացումներն ու սեփհական համոզումները եւ վերջապէս կը լղճորի, կը գիջանի ստոր հանգամանքներու, եթէ կ'ուզէ գէշ աղէկ ապրիլ:

Եր պատահին հզօր նկարագիրի տէր մարդիկ՝ որոնք, ամեն գնով կ'ընդդիմանան փորձութեանց ու միջնեւ իսկ մէկ օր կը նախընտրեն վերջ տալ իրենց կեանքին, փոխանակ անձնատուր ըլլալու միջավայրի գարշելի ցածութեանց ու ապականութեանց:

Ասանկներուն թիւը շատ ոչինչ է սակայն. ասանկները բացառութիւններ են հիմայ. իսկ « Յակօբիկ »ներն են որ լեզէոններ կը կաղմեն եւ անոնց կողմն է կեանքի աղտոտ յաջողութիւնը:

Նիւթական եւ բարոյական անկո՛ւմ, կամ անձնասպանութիւն. ահա ճշմարիտ եւ անկեղծ « բարի »ներու փառապատկը:

Որքան ալ ցաւալի ըլլայ ընկերաբանական այս անուրանալի իրական երեւոյթը, զուտ ճշմարտութիւն մըն է սակայն զոր չու-

տով կրնանք ըմբռնել ու խոստովանիլ, բաւական է որ վանքի պատերէն դուրս ալ աշխարհի մը գոյութիւնը ճանչնանք. . . :

Ներկայ կեանքի կռիւին մէջ, բարին է որ կը յաղթէ. ահաւասիկ ճգնաւորական անիմատ փիլիսոփայութիւն մը որուն վրայ շատոնց կափարիչը դրուած է եւ որուն մէջ վանականի կեղծ միամըտութիւնը պահոււտած է իր բովանդակ ծաղրելիութեամբ:

Անօգուտ է եղեր պատկերացնել «Յոկոբիկ» մը, քանի որ, Հայր սուրբին կարծիքով, անիկա «մարգակերպ հրէշ մըն է պարագային համեմատ փոխուող, փոփոխամիտ»

Կ'երեւի, Հայր սուրբը իր երկիւղած լաւատեսութեամբ, հաւատացած է թէ «Յակոբիկ» նման տիպարներ գոյութիւն չունին եւ «Յակոբիկ» միակ մոլորեալ ոչխարն է, անհեթեթ գոյացութիւն մը որուն վրայ ուշադրութիւն դարձընել անգամ չարժեք:

Իրաւ որ ազտոտ ու զգուելի արարած մըն է Յակոբիկ. բայց՝ ո՛չ միակը եւ ո՛չ ալ «առանձնական» մը:

Վանքէն քիչ մը դուրս, եւ ահա պիտի տեսնէք ուր աշխարհը լցուած է նմանօրինակ անբարոյականներով որոնք կը վիստան ամեն կողմ եւ որոնք, աւա՛ղ, ամենքն ալ գոհերն են ներկայ ընկերական ապականուած միջավայրին եւ կեանքի անարդար պայմաններուն, որոնց դառնութիւնը գուցէ կարելի է՛լ զգալ չորս պատերու մէջ, մա՛նաւանդ՝ երբ կուշտ ստամոքս մը ունենայ մարդ:

Վանքէն դուրս, Հայր սուրբ, եկէք, շտրեցէք մէկ կարգի վրայ բոլոր գործարանապետներն ու գործաւորները, տէրերն ու պաշտօնեաները եւ համարձակ ըսէք անոնց. «Ձեր մէջէն անմեղ եղողը թող ինծի քար մը նետէ:» Մի՛ վախնաք, մէկուն ձեռքն ալ առաջ չպիտի երթայ. որովհետեւ ամենքն ալ՝ աւելի կամ նուազ տարբերութեամբ՝ միջավայրի ազդեցութիւնը կրած են. ստախօսութեան, մարգահաճոյութեան, գողութեան ու քսութեան մարմնացումներն են եւ այդ չար մոլութեանց շնորհիւ է՛ որ յաճախ գործ կը տեսնեն ու կ'ապրին:

Վանքէն դուրս, հայր սուրբ, հոն, աշխարհի զազիր կեղտոտութեանց հանդէպ, չուտով պիտի համոզուիք որ դժբաղդաբար, եւ ի մեծ ցաւ սրբութեանդ հայրական սրտին, յաջողութիւնը լաւագոյնին կողմը չէ հիմայ, ո՛չ ալ յաղթանակը՝ բարին:

Պիտի տեսնէք որ չարաչար կը հալածուին եւ շատ անգամ անօթի կը տառապին այն սակաւաթիւ մարդիկը՝ որոնք ճշմարտութիւնը կը պաշտպանեն եւ անիրաւութեան դէմ մեծաձայն կը բողոքեն. իսկ՝ ընդհակառակը՝ առհասարակ փառքի ու պատուի կը հասնին անոնք որ բնաւ առիթ չ'են կորսնցներ կեղծելու, քծնելու, հաճոյակատար դառնալու:

Վանքէն դո՛ւրս, մտէք վաճառատունները, փնտռեցէք որքան կ'ուզէք, չպիտի գտնէք գրագիր մը կամ պաշտօնեայ մը որ համարձակի ճիկ մը հանել կատարուած անարգարութեանց, վաշխառութեանց ու գողութեանց դէմ:

Վանքէն դո՛ւրս, անաչառութեամբ եւ առանց նախապաշարումիքնեցէք ձեր օրհնած ամուսնութիւնները, պիտի տեսնէք որ ձեզմէ եւ սէրէն աւելի՝ տիտղոսը կամ դրամօժիտն է իսկական դերակատար:

Այն ատեն բնաւ դժուարութիւն չպիտի ունենաք գտնելու ընտանիքներ՝ ուր Փառանձեմներն ու Յակոբիկները, ամենուրեք յարգանքը վայելելով, կ'ուտեն ու կը խմեն վասն ամենամեծ փառացրն Աստուծոյ:

*
*
*

Հայր սուրբը մեզ կը մեղադրէ յատկապէս անոր համար որ ինքը չէ հասկցեր, թէ արդեօք ի՞նչ օգուտ կ'ունենայ ասանկ պատկերի մը հրատարակութիւնը, մանաւանդ՝ յաղթանակը մոլութեան տալը:

Արդարեւ, դժուար թէ հասկնան անոնք որ, ի հաշիւ իրենց կաշիին, կ'ուզեն կլլեցնել թէ աշխարհը ցաւերու հովիտ մըն է եւ թէ մարդս աշխարհի վրայ կը տառապի միմիայն իր մեղքերուն համար. . . :

Մենք այդ հրատարակութեամբ կ'ուզէինք, պզտիկ պատկերով մը, շեշտել այն ճշմարտութիւնը թէ միջավայրն է որ ամեն ստորնութեան կ'ենթարկէ մարդը, թէ չարիքն է որ կը յաղթանակէ հիմայ, թէ ճշմարիտ առաքինութիւնն ու բարին արգիլուած են ամեն տեղ եւ թէ վերջապէս մոլութիւններն են որ ապրելու միջոց դարձած են:

Թերեւս յաջողած չըլլանք. ասիկա սակայն անա՛նկ խնդիր մըն է զոր անկեղծօրէն քննադատողներուն գէժ ըսելիք մը չունինք. մեր պատասխանը՝ սկզբունքով հակառակողներուն գէժ է:

Մեզի համար, ալ եւս հերիք է բնագանցական մզլոտած վարդապետութիւններով ու հրատարակութիւններով խարել ժողովուրդը, թէ աշխարհի վրայ ամեն բան լաւ կ'ընթանայ եւ բարիներն են որ կը վայելին հարստութիւնն ու կեանքի քաղցրութիւնները:

Հերիք, փոտած նախապաշարումներով խճողել ժողովուրդին գլուխը, մեռցնել անոր ապստամբող ոգին եւ անաշխատ դասակարգերու երանութեան պատուանդանը հաստատել ամբողջի տխմարութեան ու կուրութեան վրայ:

Պէտք է, անհրաժեշտօրէն պէտք է, հասարակութեան ճանչ-

ցընել ընկերական բուն կեանքը, որ ա՛յնքան ազոտոտած է զըժ-բաղդաբար:

Պէտք է ճշմարտութիւնը խօսիլ ժողովուրդին, որպէսզի իր ցաւերուն իրական պատճառները ճանչնայ եւ անոր համեմատ ձգտի մաքրելու ինչ որ վնասակար է եւ ապականուած:

Հաւատացնել, թէ հիմակուան աշխարհին մէջ առաքինիներ կը կազմեն մեծամասնութիւն, եւ ազնուութիւնը կը տանի միշտ յաղթանակ, ատիկա ժողովուրդը նախապաշարել, քնացնել է, խաբեբայութիւն է պարզապէս, որուն դէմ պատրաստ ենք կռուի միշտ մեր բոլոր ուժով:

ՎԱՀԱՆ ՇԱՀՐԻՄԱՆ

Փ Տ Ա Խ Տ Ը

Այս վայրկենիս ֆռանսան՝ Մեծ Յեղափոխութեան հայրենիքը՝ ցաւագին տապալակումի մը մէջ, իր էն անաւոր տագնապի օրերը կ'անցնէ: Ամեն ժամանակէ աւելի 89 ի սկզբունքները վտանգի մէջ են:

Սուտ է կարգ մը յիմար chauvin ներու կլլեցնել ուզած այն կարծիքը թէ՛ ամբողջ իրարանցումը անհատի մը շուրջը կը դառնայ

Զօլայի «կառքաստանեմ...» հոյակապ յօդուածէն ի վեր խընդիրը նոր փուլի (phase) մը մէջ մտաւ. անհատի մը իրաւունքը չէ՛ այլ անհատական իրաւունքներն է որ խնդրի տակ են:

Եղծիքի, այլասեռումի ու փտութեան ամբողջ դարի մը հակադեցութիւնը՝ եղեռնադատ ատեանին մէջ կը պայթի այս օր: Յօդուած մը մինակ, բովանդակ ֆռանսան ելեկտրական կառաղի հոսանքի մը մէջ դրաւ: Զօլայի ըմբոստացումի շարժումին մէջ կը խտանայ ամբողջ դասակարգի մը բողոքի ձայնը. մարդկային տարրական իրաւունքներու խեղդումին դէմ արձակուած վտանգի ազդակն է ան՝ ուր արձագանգ կը գտնեն ամբողջ անժառանգներու եւ տկարներու վրդովանքն ու ընդվզումը:

Ոմանք՝ ֆռանսան մղձաւանջի մը մէջ պահող այս շարժումին խորը, ընկերական յեղափոխութեան մը չեփորին ձայնը լսել կը կարծեն: Իէպքերն ու ձգտումները խոչորացոյցի մը տակ դիտել պիտի ըլլար. բայց ապահովաբար, արդարացի պահանջումներու գիտակցութեան զարթնումին համար եղած խոչոր ոստում մըն է այս երեւոյթը:

Միւնչդեռ մէկ կողմէ հակահրէականներու ձայնատարները՝ Տոիւմոններն ու Ռօչֆօռները՝ որսի մը ետեւէ արձակուած շուներու վոհմակի մը պէս, ամբօխը տխմար՝ իր անգիտակցութեանը մէջ

ոճրագործ՝ հրէաներուն վրայ կը քշէին: ու մինչդեռ, իրենց ճագարի ուղեղը, ալիք մատիայի կրկնումովը քարացած կաթուղիկ ուսանողները (°) Չոլան, Շէօսէր Քէսաները կը քարկոծէին եւ մինչդեռ քանի մը «մտաւորականներ» զգուշիկ հայրենասիրութենէ մը յիմարացած՝ իրենց փրփրած բերնին լորձուքները կը նետէին աջ ու ձախ, երեսին անոնց՝ որ իրենց մէջ չէին սատկեցուցած տակաւին Սրդարութեան եւ Իրաւունքի զգացումները, հաւատալով մարդկութեան համար ազւոր իտէալի մը, անդին հետզհետէ աճող խուլ ու խորունկ սարսուռ մը կ'երթար արթնցնել ամեն քնացողները:

Ուսանողներէն սկսած մինչեւ բոֆէսօսները, բանւորներէն մինչեւ բանաստեղծները, իրենց հոգիին մէջ պայթող զայրոյթն ու բողոքը կը պոռային մարդկային իրաւունքներու բռնաբարումին ու գէշի հաւատաքննութիւնը եղած այս նահանջին դէմ: բողոք, բողոք, բողոք: Համէթի «բառեր, բառեր, բառեր» ուն պէս: Տկարի, թուլամորթի, անկարողի դէնք՝ որ պուժուազիին արհամարհոտ անհարբերութեան դէմ կը փշրի: Բողոք, այո՛, բայց ձեռքը միշտ լեցուն: Ըմբոսացումի շարժում մը որ արիւնին մէջ կանգ առնէ. անձկութեան աղաղակ մը՝ որ հոգիի կատարեալ հանդարտութեան մէջ վերջանայ: Ապա թէ ոչ ամեն բան պարապէ: «Բառեր բառեր, բառեր:»

*
*

Պուժուազին հետզհետէ սպառնալից կերպարանք մը առնող ընկերական շարժումին առջեւ թումբ մը տնկելու համար, քառորդ դարէ մը ի վեր արիւնի մէջ թապլտկիլ սիրող Պոնաբառթի մը երազները կը շինէ կոր:

Անժառանգներու ճակտին քրտինքովը յառաջ բերած Մեծ Յեղափոխութեան աւարին վրայ նստելէ ետք՝ զանի մարտիկ կարիւնալու համար Պոնաբառթի մը պէտքն զգացած ու զանիկա ստեղծած էր:

Հիմակուան հանրապետութիւնը՝ որ պուժուազի կառավարութիւն մըն է գերազանցօրէն, զինքը գոհացնելու երեւոյթը չունի, իրեն զօրաւոր երաշխաւորութիւն մը չի կրնար կոր տալ. մեծցող շարժումը՝ մէկ հարուածով մը եթէ ոչ փոշիացնելու գէթ ուժով ձեռքով մը կեցնելու համար նորէն Պոնաբառթ մը պէտք է իրեն: Բայց աւա՛ղ, որ Փորսիքայի հրաբուխները շատոնց մարած են ու չեն կրնար արիւնիզակ լակոտ մը փսխել: Փորսիքայի հրաբուխներուն ճիշդ դիմացի երկիրը սակայն, արիւնը բիբերուն մէջ կալ կալ, պղտորած ու մութ աչքերով զաւակներ կը ծնի կոր, բայց

գոթադղարար անոնք, այդ Անճէլլիօներն ու Քաղէոիօները, փոխանակ բանւորներու անդոյն, մարած արիւնէն համ առնելու՝ պուռփուաներու տաք ու յորդող արիւնին՝ դաշոյնի աղւոր հարուածի մը տակ՝ միջոցին մէջ գծած կորին տուած հեշտանքը կը փնտռեն կօր: Է՛հ, ինչ ընես, ճաշակի վրայ վիճել չըլլար:

Փխտութիւնը ապացուցած է որ, բնութեան մէջ ոչ միայն նիւթն է որ չի պակսիր կամ չաւելնար, այլ եւ ամեն ուժ որ կը վատնուի գործողութեան մը մէջ, տարբեր ձեւի մը տակ նարէն երեւան կուգայ: Պուռփուադին ու ասոր ներկայացուցիչներուն, նաբոլէոններուն կողմէ վատնուած ուժը՝ անժառանգներու արիւնը թափելու համար, անխուսափելի կերպով պէտք է արձագանգ գտնէ Անճէլլիօներու եւ Քաղէոիօներու մէջ. վատնուած ուժը պէտք է տարբեր ձեւի մը տակ երեւան գայ: Չարմանալու ոչինչ չկայ: Տարբերութիւնը սա իրողութեան մէջն է որ վերջինները քիչ մը աւելի գեղադիտութիւն (esthétique) ունին, ծղզած ու ամբած մարդերու արիւնին ցայտքէն ակորփելու տեղ, լեցուն, աղւոր ու արիւնը խաղալով շրջան ընող մարդերու արեան ժայթքումին գլխու պըտոյտը կուգեն ունենալ: Ի՞նչու մեղադրենք, յառաջգիմութիւն մըն է:

* *

Ֆուսան Ժայրայեղութիւններու երկիրն է. պայթումն ու զսպումը, ընդգլուճն ու համակերպութիւնը՝ հաւատարմալէս շուտ ծնունդ կ'առնեն: Պուռփուադին ճարահատած՝ Նաբոլէոն մը փրնտունէ՝ փրփուրին փաթթուող յուսահատին պէս, զօրավար Պուլանփէին երկնցուց գողօններով բեռնաւորուած ու բանւորներու արիւնովը կարմրած ձեռքերը, տարսափելով Մաքպէթի մը պէս արիւնին կարմիրէն. բայց ձեռքերը օդին մէջ միացին: Հիմա Մաքպէթին պէս ամեն վայրկեան ձեռքին վրայ տեսնել կը կարծէ արիւնին կարմիրը, ու զանոնք սրբելու գերագոյն ճիգեր կընէ:

«Եւ սակայն աշխարհին ծովերն ամբողջ չեն կրնար մաքրել»:
Քանի որ անկարող է նաբոլէոններ ու պուլանփէներ մէջ տեղ հանել, գէթ կրնայ ուժ տալ նաբոլէոններու կոտորակներուն: Ձինւորականութիւնը կ'ուժովցնէ չղադրելով սակայն նաբոլէոնի ուրուականը Սէնդ-էլէնէն կոչելէ:

* *

«Բանակին պատիւը, Բանակին պատիւը» կ'ոռնան պուռփուաները Արդարութեան պալատին առջեւ, Բարիզ: Ու կեղծաւորութիւններու այդ էն աղտոտը, հայհոյանքի ու կղկղանքի խոչ՝ որ

կտորի մը պէս կ'երթայ կը փակչի Արդարութեան ճակտին:

Ո՞վ սակայն այնչափ միամիտ եղած էր հաւատալու պուռժուազիին, թուրակի պէս, ամեն օր կրկնած ուռուցիկ բառերուն: Այդ կարմիր հանրապետականները՝ իրենց գիմակները վար առած են ալ ու այս վայրկեանիս բզիկ, բզիկ պիտի ընեն ոչ միայն Զոլան որ վտանգի աղաղակը նետեց ու իր ատելութիւնը անմահացուց այս մինչեւ ծուծերը փտախտաւոր ընկերութեան ու անոր զարչելի հաստատութիւններուն դէմ, այլ ամեն անոնք՝ որ հիմա « Vive la République » կը կանչեն:

Այս դէպքին պէտք չունէինք մենք պուռժուազիին հոգիին էն մութ ծալքերը քրքրելու ու անոր ուղեղին մէջ վխտացող ոճրագործ մտածումները ոէօնտկէնի ճառագայթներէն անցնելու: Զիրար չատ աղէկ կը հասկնանք:

Տրէյֆիւս կամ Պիցեօ, Էսթէրհազի կամ Պուատիէֆո հաւասար են մեզի համար. եթէ առաջինները Ֆռանսան կը ծախեն քանի մը տարին անգամ մը օտարին, երկրորդները Ֆռանսան կը ծախեն ամեն օր իրենց գարչելի ես ին: Եւ երկրորդները աւելի չնական աւելի պժգալի են անոր համար որ առաջիններուն արիւնովը կուգեն իրենց ոճիրը քաւել, երկրորդ անգամ մըն ալ կարենալ առաջնորդելու համար Ֆռանսան դէպի Սըտան:

* * *

Հապա այն ըմբոստացնող կատակերգութիւնը որ կը խաղան այս վայրկեանիս Արդարութեան պալատին մէջ՝ այն խեղկատակումը որ կը համարձակին ներկայացնել ձշմարտութիւնը (°) երեւան հանելու համար, այս ամենը՝ եթէ մեզ կատաղութենէ չզալարեցնէին, օրերով պիտի խնդացնէին:

Խեղճ Ֆռանսա. իր Մեծ Յեղափոխութեան օրերուն մէջ, որոնք իր մանկութեան երազանքի օրերը պիտի միան հիմա, մարդկութեան էն ընտրուած մասը կը ներկայացնէր:

Հիմա՞: Սպանիայի, Գերմանիայի, Ռուսիայի աչքը լոյս. թող Մեծ Ֆռանսան ալ իրենց կարգին մէջ ընդունին: Ազնուականութեան արիւնը՝ պուռժուազիին տոգոյն ցնորքները միայն վարդագունեց. իր տարիներով նենգած նպատակը վերջապէս յաջողեցաւ բարձրացնել միամիտ ու անգիտակից ամբոխի մը տարտամ ձրգտումներուն մէջ տեղ: Ու երկրին բացարձակ տէրը դարձած՝ իր հոգիին ամբողջ թարախը՝ իր կազմալուծուած մարմինն, ամբողջ փտախտը, բոզի մը պէս փոխանցեց ամենուն: Ազնուականութիւնը՝ իր գերագոյն տիրոջ, պաշտպանի ու զօրաւորի իրաւունքին անունով կը չահագործէր անժառանգները, ինք չնական կեղծիքով

մը՝ Արդարութեան Իրաւունքի, Եղբայրութեան անունին տակ սկսաւ կատարել վանքի ու գերբ: Կռիւր լոյսին մէջ տեղի կունենար արձակ համարձակ. ինք մութին մէջ փոխադրեց, աւելի չուտով գլուխ հանելու համար իր խողխողումի գործը:

Տրէյֆիւսի դատը սակայն ամենէն աւելի սուր կերպարանքի մը մէջ գրաւ տիրող դասակարգին եւ համակերպող մասին յարաբերութիւնները: Այն օրէնքները՝ որով պուռժուագին իր առանձնաշնորհումները կը պահէ, եւ որուն մեղսակից ստուերին տակ իր արիւնոտ եղերերգութիւնը կը խաղայ ամեն օր, քիչ մը չափազանց թոյլատու (°) կը գտնէ հիմա. ու իր իսկ ձեռքերով չիսած օրէնքներուն զէմ ինք կ'ըմբոստանայ: Երեսը թէպէտ եւ Հանրապետութեան՝ բայց ձեռուրները միշտ Կայսրութեան կ'երկննան:

«Յառաջացած» մասը՝ պուռժուագիին ձգտումներէն ահաբեկած՝ ահագին իրարանցումի մէջ է. անդամահատութեան մը պէտքը անխուսափելի կը գտնէ: Ատկէ աւելի յիմարութիւն չեմ գիտեր ես. փլչող տուն մը մէկ երկու գերաններով կենդանացնել ուղեւոր պէս բան մըն է ատիկա: Քանդումին հաճոյքը տուէք մեզի՛ ու մեր աչքերը թող հինին աւերակներուն վրայ բարձրացող աղւոր չէնքին գգուանքները վայելն:

Բանամաներու, Տրէյֆիւսի դատերուն պէտք չունէինք մենք պուռժուագիին հոգիին մէջ տարածւող փտախտին ծաւալը չափելու համար: Աւելի աղէկ. անոնք որ ջղջիկի աչքեր չունին մութին մէջ կատարող եղերերգութիւնը տեսնելու համար, թող պոռացող գայթակղութիւններու լոյսին տակ տեսնեն: Քաջութիւն պիտի ունենան սակայն իրենց համակերպութեան տիղմէն վեր բարձրանալու. ու դիակներու վրայ միայն ոռնացող ատելութիւնը իր ամբողջ սաստկութիւնովն զգալու:

Ամբոխը՝ առանց գիտակցութեան, առանց դատողութեան մտայն անսահման զանգուածը՝ պուռժուայի քանի մը սուերովը գինովցած՝ պուռժուագիին թմբուկը կը զարնէ: Իսկ թշուառութիւնը, չարչարանքը իր մորթին վրայ զգացող բանտորը քիչ մը չափազանց վատացած է չողացնելու համար սուրը՝ իր զահիճներուն գլխուն վրայ: Իր տղայի երեւակայութիւնը՝ շատ շատ կը չլանայ արիւնը կուտ մը չարժող զօրավարներուն եւ սպաններուն խայտաբղետ հանդերձանքէն:

Ռոշֆոններու, Տոբիմոններու եւ Մաք Ռէժիս կոչուած սրիկաներուն առջեւ «հուռ» կը պոռայ ու իրեն համար մեռնող Անճէլիիօներուն եւ Քաղէոիօներուն առջեւ «արիւն արիւն կ'ոռնայ»: Յիմարն'եր: Արիւն կ'ուզէք. արիւնի՛ ծարաւ էք: Սխալ ճամբայ եկեր էք: Ետ դարձէք: Այդ մարդոց արիւնը ձեզ չի կըշ-

տացներ. անոնց արիւնը 89 ի դրօշակները պիտի պատրաստեն, եթէ ձեզի չպէս ոչխարները կարմիր դրօշակներու պէտքը չեն զգար, ուրիշներ անոնց ա'խը կը քաշեն:

Ետ քաշուեցէք. դուք ձեր տիղմին մէջ միայն հանգիստ կ'ըզ-
գաք ինքզինքնիդ:

Ե՛հ, ձգեցէք որ սատկին այդ խոզերը. ձգեցէք որ զինուորակա-
կանի սուրին ու պուռժուազիին կոշիկին տակ իրենց մարմնէն
դուրս փսխեն իրենց գարշելի հոգին: Անոնք նեղը դրուած շու-
ներուն կը նմանին որ զիրենք ծեծի տակ սատկեցնող ձեռքին
վրայ յարձակելու տեղ՝ գաւազանին վրայ կը նետուին ու անոր
ծայրը կը խածնեն կատաղօրէն:

*
*
*

«Mort aux juifs. Vive L'armée.» աղաղակը թաթառի մը պէս
կը պայթի կոր ամբողջ Ֆռանսայի վրայ: Տարի մը առաջ թուր-
քիայի մէջ կատարուած զոհելի ու ըմբոստացող տեսարանները
Ալճէրիայի մէջ կրկնուեցան ու նոյն իսկ Ֆռանսայի ու Բարիզի
պէ մէջ արձագանգ գտան: Ֆռանսայի պուռժուաները ի՞նչ տարբե-
րութիւն ունին Թուրքիայի մոլեռանդ ու անտաշ վայրենիներէն:
Քաղաքակրթութեան ծիրանին ոչ մէկ կերպով չի կրնար ծածկել
կազմալուծուած մարմինն փտախտը: Անդին Մուհամէտի անունով
մարդիկը նապատտակի մը պէս կ'ըսպանեն, ասդին Ոսկեհորդին
համար:

Ու աշխարհիս էն տխուր կատակերգութիւնը կը կատարուի:
Կուգայ ատեն մը ուր պուռժուազին խեղճ միամիտ ժողովուրդ մը
չարաչար խաբելու համար, յանկարծ կը յուզուի, կ'ըմբոստանայ
թուրքիայի իր արժանաւոր եղբայրներուն վայրենութիւններուն
դէմ, քաղաքակրթութեան, ու շատ մը աղւոր սկզբունքներու ա-
նունով կը բողոքէ ու նոյն իսկ... կուլայ: Կոկորդիլոսի արցունք-
ներ, արցունքներ՝ որ թերեւս ներքին գոհունակութեան մը խը-
տացումներն են:

Այս կատակերգութենէն աւելի կատղեցնող կատակերգութիւն
չեմ գիտեր ես:

*
*
*

Այս տողերը գրած պահուս, հեռագիրը Զոլայի դատապարտու-
թեան լուրը կը բերէ: Անակնկալ մը չէր: Հակառակը միշտ պի-
տի զարմացնէր: Աւելի աղէկ, Դատարանէն սկսած մինչեւ Խոր-
հրդարանը, Ռամկավարութեան եւ հաւասարութեան (°) այդ երկու
փառքերը, ժողովուրդին շահերուն այդ երկու հռչակաւոր փառա-

բանները, իրենց կարգին կուգան իրենց վստահութեան քուէները տալ պուռժուազիին: Այլ բան մը պակաս չէ: Աղւոր առած մը ունինք մենք. «չունը չանը միսը չուներ»: թովմաս առաքելալի աշակերտները թող մատերնին պատրաստեն: Փաախտին գոյութեան ասկէ աւելի մեծ ապացոյց չըլլար:

Երգուեալ դատաւորները (12 կարմիր պուռժուաներ) ճայներու մեծամասնութիւնով Զոլան յանցաւոր (°) գտեր են. այսինքն կը վկայեն որ Զոլան Հանրապետութեան նախագահին, նշանաւոր կոչեցործ Ֆէլիքսին, ուզող «կամբաստանեմ...» հոյակապ նամակով իրենց սրբասուրբ հաստատութիւններէն մէկուն դէմ հայհոյեր է, բանակը ապստուեր է: Ի՞նչ հարկ կար 15 օր ամբողջ Բարիզի Եղեռնադատ ատեանին մէջ իրար կոխկռտելու ու անսահման բազմութեան մը շունչովը աղտոտած մթնոլորտը ծծելու քացարձակապէս աւելորդ չարչարանքին: Երգուեալները իրենց ձեռքերը խզճին վրայ դրած կրնային դատը չըսկսած վճիռ արձակել. 15 օրուան յոգնութիւնը կրելն յիմարութիւն էր: Իրենց վճիռն անիոփոխ էր. մարդ իր քաքին փու չըսեր: Գործադուլի ատեն զիրենք բանւորներու կատաղութենէն ազատող բանակին հայհոյողները անպատիժ չեն մնար:

Երգուեալներու շնականութեան վրայ պզտիկ գաղափար մը կրնաք ունենալ սա քանի մը տողերուն ընթերցումովը:

Զոլայի դատաւարաւորութենէն ետք, Ռասիֆալ թերթին խմբագիրներէն մէկը 12 երգուեալներէն մէկը խօսեցուցեր է դատին վրայ: «Դատին սկիզբէն 12 էն 7 ը Զոլայի հակառակ էին արդէն ըսիւ է. խանդավառներ էին ատոնք, բայց միամիտ խանդավառներ: Ուրիշներ, աւելի հանգարտ, աւելի ծարաւի արդարութեան(°) եւ լոյսի (°) իրենց համակրութիւնը չէին ծածկեր ամբաստանեալին:

Վճիռը զիս խորապէս դարմացուց, ըսեմ ձեզի: Հինգը անպարտ արձակուելուն կողմնակից էին: Ամեն պարագայի մէջ մեղմացուցիչ պարագաները պիտի ընդունուին կը կարծէի: Ի՞նչ է ասոր պատճառը: Թերեւս երգուեալ դատաւորներուն մէջ, ամբողջ խելացի (հարկաւ մենք չենք որ ասորը հակառակը պիտի պնդենք. ամեն պուռժուա իր շահերուն գիտակցութիւնը ունի) մարդերէ բազկացած, մէկը կը պակսէր որ չվախնար վիճելու չափ յառաջ երթալու:

Յարաբերութիւնները շատ փափկանկատ էին, իրաւ է, բայց քիչ մը իրենց աչքին պոչովը կը նայէին իրարու: Իրարու միտք կը հասկնային: Այն ատեն, կը հասկնաք, մարդ միշտ ինքզինքը վտանգի գնելէ կը վախնայ: Ա՛հ, մարդ ազատ եւ անհատալոյս, միայն քե՛ս, մարդ գործի մեք ե՛:

Երնձաք ասկէ աւելի անպատկառ չնականութիւն երեւակայել: Ամբողջը կարելի է սա խօսքին մէջ ամփոփել «մենք մեր շահերուն դէմ չենք կրնար գործել:»

Նորութիւն մը չէ ատիկա մեզի համար: Արդարութիւն, իրաւունք բառերուն պուճուկներն համար չինարէն բլլալը գիտենք: Արդի ընկերութեան ամբողջ հաստատութիւններուն եւ կարգ ու սարքին զճրագործ ու անիրաւ բլլալու վկայութիւնը պուճուկներու կողմէ սպասելու պէտք չունինք: Փտախտը կարելի չէ ալ ծածկել:

Զոլայի դատապարտութեան լուրը պուճուկներու Բարիզը կատաղած խանդավառութեան մը մէջ դրեր է, իրենց յիմարութեան մէջ հրէաներու տունները քարի բռներ են: Իրաւունք ունին: Յաղթուողները ախրա՞ծ են արդեօք, չեմ կարծեր, Զոլայի յաղթանակը բան մը չպիտի կրնար պակսեցնել ընկերութեան փութութենէն, պարտութիւնը սակայն քայլ մըն ալ կը յառաջացնէ փտախտը: Ո՞վ գիտէ մութին մէջ քանի էմիլ Հանսիններ կը պատրաստուին:

* * *

Զէ՛ անշուշտ չուշանար փոթորիկը, 89 ի թուականները նորէն կը բացուին հարկաւ: Երկիրը ծարաւէն ճաթոտած է, արիւն դարձեալ արի՛ւն: Իրենց սիրական տնտեսագէտին՝ Մալթիւսի օրենքը շատ գործադրուեցաւ բանւորներու անձին վրայ, ճշմարիտ հաւասարակշռութիւնը գտնելու համար է՛քիչ մըն ալ պուճուկ թող մորթեն հոգ չէ: Արի՛ւն, զարձեւալ արիւն, այդ կարմիր հեղուկէն աւելի աղւոր բան չկայ, անիկա բիբերը կը գզուէ եւ ուղեղին մէջ ամբողջ երաժշտութիւն մը կ'արթնցնէ: Բանւորներու հոգեվարքի հոնչիւններէն մեր ականջները վիրաւորուեցան, քիչ մըն ալ ուրիշ տեսակ հոգեվարքի ներդաշնակութիւնը մտիկ ընենք: Մառսէյեհգեկն ետք Քառնանեօլը: Անժառանգները երկար ատենէ ի վեր խնջոյքի երես չեն տեսած, ատելութեան ուրուականի մը մէջէ ուրախութեան երգերը անգամ մըն ալ թող թռչին: Այս տխրութեամբ խտացած մթնոլորտը անգամ մըն ալ թող ծաղկի տօնական օրերու ուրախութիւնով: Արիւնի անսահման լճացումներու վրայ անգամ մըն ալ թող պայթի արդար պահանջումներու աղաղակը, դիակներու կոյտերուն վրայ անգամ մըն ալ թող ոռոյց աւետարներ վրէժխնդրութիւնը: Հաճոյքներուն էն գինովցնողը Քանդումի հաճոյքն է:

ԱՅՑԵԼՈՒ ՀՈՎԻՒ

Կ'իմանանք որ, այցելու հովիւ Տ. Արսէն Վեհունի վարդապետը Վառնայէն տեղս վերադառնալով՝ սկսեւ է անցեալ տարուը նէ մնացորդ (պագայէ) իր յետադիմական քարոզներու շարքին:

Հայր սուրբին այս կիրակի օրուան քարոզին նայելով՝ Երկինքն ալ վայելել կարենալու համար, անիրաւ մամոնան անհրաժեշտ է եղեր. ուրեմն վայ անոնց որ ամեն ջանքերէ վերջ չեն յաջողիր այդ անիրաւ մամոնան ձեռք բերելու:

Կ'երեւի Հայր սուրբը այս ճշմարտութիւնը շատ լաւ ըմբռնած ըլլալուն համար է որ շարունակ անիրաւ մամոնայի տիրացողներու շուրջը կը դառնայ, հակառակ Յիսուսի, որ կ'ուզէր միշտ ազգատներէ չըջապատուիլ:

«Խուզակ»ի յաջորդ թիւով պիտի խօսինք, թէ Հայր սուրբի քարոզութիւնները հասարակութիւնը դէպի ուր կ'առաջնորդեն, եւ թէ ի՞նչու Հայր սուրբը շարունակ դաւաճան, վատ եւ այլն կ'անուանէ, կոկորդը պատուելու աստիճան ուժգնութեամբ, այն երիտասարդները՝ որոնք յառաջդիմական մտքերով գինձած են իր քարոզած յետադէմ գաղափարներուն դէմ. ասկէ զատ պիտի ցոյց տանք նա եւ որ, կրօնքի հնաւանդ կարգերուն ու օրէնքներուն ջերմ պաշտպան, եւ անոնց մէկ թելին դպչողը Եկեղեցւոյ բեմէն անլուր ածականներով մկրտող Հայր սուրբը գործնականին մէջ ինչպէս գլխովին հակառակ կ'ընթանայ Մեծ Վարդապետին քարոզած այն վսեմ սկզբունքներուն զորս ամենէ առաջ ինք պէտք էր իր անձին վրայ փայլեցնել:

ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ

Ստացանք Բարիդէն իշխան Գ. Լուսինեանի հրատարակել սկսած Քրիստոսեան հայերէն ընդարձակ քառգիրքէն թերթ մը, ինչպէս նա եւ չըջարեալկան նամակ մը քարտուղարին կողմէ գրուած. այս պզտիկ նմոյշէն կը կաղմենք գաղափար մը գործին վրայ իբրեւ ճոխ եւ աւելի կատարելագործեալ քան իր նախորդները: Այս առթիւ մեր ուրախութիւնն ու շնորհակալութիւնը յայտնելով մէկ տեղ կը փութանք նա եւ ըսել, թէ գործը աւելի կատարելատիպ պիտի ըլլար եթէ տաղանդաւոր հեղինակը բարեհաճած ըլլար բառերու նշանակութիւնը աշխարհորէն լեզուով գրելու:

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Հնչակեան վերակազմեալ կուսակցութիւնը, Լօնտօնի մէջ, սկսած է հրատարակել «Նոր կեանք» անունով կիսամսեայ հանդէս մը, քաղաքական, գրական եւ ազգային: Այս հանդէսին կ'աշխատակցին թրքահայ մամուլին մէջ կարեւոր ծառայութիւն մատուցանող՝ կարող գրագէտներ: Ծ'արդ հրատարակուած թիւերուն պարունակութիւնը կ'արդարացնեն այսպիսի ուժերէ կազմուած խումբի մը վրայ դրուած յոյսերը: Իր պարունակութիւնը աւելի պատմական ու գրական է: Իբրեւ օգտակար հրատարակութիւն՝ իր յարատեւութեանը համար մեր փափաքը կը յայտնենք:

Տարեգին. Եւրոպայի համար 10 ֆր. Ամերիկայի համար 2 թլ.

Հասցէ—L. Frauk, 309 Ladbroke Grove London

ՇԱՐԺՈՒՄ

Այս անունով, Վառնայի մէջ, սկսած է հրատարակուիլ կիսաշաբաթաթերթ մը խմբագրութեամբ պր. Գամիր Արշաւիրի եւ Երուանդի: Նայելով իրենց յայտարարութեան, այս թերթը պիտի լինի անկախ ու անկողմնակալ, որ տալով հասարակութեան, օրուան հետաքրքիր լուրերն՝ պիտի ջանայ մի եւ նոյն ժամանակ իր չափով նպաստել նա եւ հայ մտքի ու սրտի մշակումին:

Կ'ողջունենք «Շարժում» ի երեւումը այն յուսով որ ան իր յայտարարութիւններուն համեմատ պիտի ընթանայ:

Տարեգինը Պուլկարիայի համար 10 արտասահմանի 12 ֆր.

Հասցէ—ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՎԱՌՆԱ.

THE CHURCH

OF THE CITY OF NEW YORK

IN THE MATTER OF THE
ECCLESIASTICAL DISTRICT OF
THE CITY OF NEW YORK
AND
IN THE MATTER OF THE
ECCLESIASTICAL DISTRICT OF
THE CITY OF NEW YORK

IN THE MATTER OF THE
ECCLESIASTICAL DISTRICT OF
THE CITY OF NEW YORK

IN THE MATTER OF THE
ECCLESIASTICAL DISTRICT OF
THE CITY OF NEW YORK

THE CHURCH

OF THE CITY OF NEW YORK

IN THE MATTER OF THE
ECCLESIASTICAL DISTRICT OF
THE CITY OF NEW YORK

IN THE MATTER OF THE
ECCLESIASTICAL DISTRICT OF
THE CITY OF NEW YORK

IN THE MATTER OF THE
ECCLESIASTICAL DISTRICT OF
THE CITY OF NEW YORK

IN THE MATTER OF THE
ECCLESIASTICAL DISTRICT OF
THE CITY OF NEW YORK

IN THE MATTER OF THE
ECCLESIASTICAL DISTRICT OF
THE CITY OF NEW YORK

IN THE MATTER OF THE
ECCLESIASTICAL DISTRICT OF
THE CITY OF NEW YORK

ՆՈՐ

ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՄ

ՀԱՒԱՔԱՆՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ

Այս երգարանը որ ասկէ առաջ 2,20 ի կը ծախուեր, գնելով բոլոր օրինակները՝ զեղջեցինք գինը, որպէսզի որքան կարելի է շուտ ու շատ տարածուի. կ'արժէ ամեն տեղի համար Փր. 1,75

Դիմել գրավաճառ Գ. Տէօքմէճեանի Ռուսչուք:

Կը խնդրուի թերթս ընդունողներէ որ հաճին իրենց լաժնեզները ուղարկելու:

Թերթիս ձեւը փոխելով, առաջին ու վերջին երկու երեսները ծանուցումներու յատկացուցած ենք և կ'ընդունինք ծանուցումներ իւրաքանչիւր պարզ գիրի համար 1, իսկ զարդագիրի համար 2 սանդղիմ ստանալով

ԽՈՒԶԱԿԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ՅԱՆՁՆ ԿԱՌՆԷ ՏՊԱԳԵԼ

Հայերէն Պոլիարերէն եւ Ֆրանսերէն լեզուներով

ԱՅԾԵՏՈՄՍ, ՀՐԱԽԻՐԱՏՈՄՍ, ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԹՂԹԵՐ, ԵՒ ԱՅԼՆ

ԿԸ ՏՊԱԳՐԷ ՆԱԵՒ ԶՈՓԱԽՈՐ ԳՆԵՐՈՎ

ԳՐԲԵՐ ՈՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ

ՀՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԱՐ

